ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Երևան

«30» հունիսի 2021թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Եղիազարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետ

հանձնաժողովի անդամներ՝

Էդգար Տոնոսկանյան՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար

Արմինե Ալիխանյան՝ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար

Հայկ Սարգսյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

Նիստից բացակայում էր՝

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/04» ծածկագրով ընթացակարգի շրջանակում Սմարթլայն ՍՊԸ-ի և ՕՊՏՇԻՆ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում /էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարություններում (Հավելված 1)/ արձանագրված անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ.

Սմարթլայն ՍՊԸ-ն, ՕՊՏՇԻՆ ՍՊԸ-ն իրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել են հայտերում /էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարություններում (Հավելված 1)/ արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց.

Սմարթլայն ՍՊԸ-ի, ՕՊՏՇԻՆ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների, մերժված հայտերի և ընթացակարգը 1-ին, 2-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- 3-րդ, 6-րդ, 7-րդ, 12-րդ չափաբաժինների մասով Սմարթլայն ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,
- 13-րդ չափաբաժնի մասով ՕՊՏՇԻՆ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,
- 4-րդ, 5-րդ չափաբաժինների մասով ՍՈՆԻԿ ԵՐԻՑՅԱՆ ԱՇՈՏԻ Ա/Ձ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 4-րդ, 5-րդ, 13-րդ չափաբաժինների մասով մյուս մասնակցի՝ Սմարթլայն ՍՊԸ-ի հայտը մերժել,
- 12-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակցի՝ ՕՊՏԻՇԻՆ ՍՊԸ-ի հայտը մերժել:

2.2 1-ին, 2-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ չափաբաժինների մասով՝ Սմարթլայն ՍՊԸ-ի, 6-րդ, 12-րդ, 13-րդ չափաբաժինների մասով՝ ՍՈՆԻԿ ԵՐԻՑՅԱՆ ԱՇՈՏԻ Ա/Ձ-ի, 9-րդ, 10-րդ չափաբաժինների մասով՝ ՕՊՏԻՇԻՆ ՍՊԸ-ի աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գները, ուստի նշված չափաբաժինների մասով ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են մերժված:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգը 1-ին, 2-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, իրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Արթուր Եղիազարյան

Անդամներ՝

Էդգար Տոնականյան

Արմինե Ալիխանյան

Հայկ Սարգսյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան